



**Հայաստանի
Հանրապետության
վերահսկիչ պալատը**



**Բելառուսի
Հանրապետության
պետական
վերահսկողության
կոմիտեն**



**Ղազախստանի
Հանրապետության
հանրապետական բյուջեի
կատարման նկատմամբ
վերահսկողության
հարցերով հաշվիչ
կոմիտեն**



**Ղրղզստանի
Հանրապետության
հաշվիչ պալատը**



**Ռուսաստանի
Դաշնության հաշվիչ
պալատը**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ ստուգում՝ 2015 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները

հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելված) պահպանման նկատմամբ»

(հաստատված է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կոլեգիաների (խորհուրդների, լիազորված մարմինների) համատեղ նիստի որոշմամբ, 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ _____ արձանագրություն)

1. Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու հիմքերը

բոլոր կողմերի համար՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի ու հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելված) 53-րդ կետը.

բոլոր կողմերի համար՝ «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու մասին» 2016 թվականի ապրիլի 29-ի համաձայնագիրը.

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի համար՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի տարեկան ծրագիրը.

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի համար՝ Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի

կողմից 2016 թվականին անցկացնելու համար նախատեսված վերահսկիչ գործունեության հիմնական միջոցառումները.

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի համար՝ Պետական աուդիտի 2016 թվականի օբյեկտների ցանկը.

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի համար՝ Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2016 թվականի աուդիտների պլանը.

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի համար՝ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2016 թվականի աշխատանքների պլանը.

2. Համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան. լիազորված մարմինների գործունեությունը՝ ուղղված ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը Եվրասիական տնտեսական միությունում կիրառելուն (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն):

3. Համատեղ վերահսկիչ միջոցառման օբյեկտները.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Երեւան), Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Մինսկ), Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտե (քաղ. Աստանա), Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան (քաղ. Բիշկեկ), Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչություն (քաղ. Մոսկվա), Դաշնային գանձապետարան (քաղ. Մոսկվա).

լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար նախատեսված օբյեկտները.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ ԵՏԿ), Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ), Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե (այսուհետ՝ ԲՀ ՊՄԿ), Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՂՀ ՖՆ ՊԵԿ), Ղրղզստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայություն (այսուհետ՝ ՂՀ ԿԱ ՊՄԾ), Դաշնային մաքսային ծառայություն (Ռուսաստանի ԴՄԾ):

4. Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ժամկետը. 2016 թվականի ապրիլ - նոյեմբեր ամիսներ

5. Համատեղ վերահսկիչ միջոցառման նպատակները.

5.1. ստուգել Միության անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները լիազորված մարմինների կողմից մյուս անդամ պետությունների հաշիվներին փոխանցելու ամբողջականությունն ու ժամանակին կատարելը.

5.2. ստուգել յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները բաշխելու նորմատիվների պահպանումը լիազորված մարմինների կողմից.

5.3. վերլուծել ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի՝ Միությունում գործարկելու արդյունքները:

6. Գործունեության ստուգման ժամանակահատվածը. 2015 թվական.

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրությամբ սահմանվում է Միության անդամ պետությունների միջեւ այն ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը, որոնց մասով Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների առնչությամբ վճարման պարտավորությունն առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Արձանագրությամբ յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված են ներմուծման մաքսատուրքերի գումարները բաշխելու նորմատիվներ. 2015 թվականի հունվարի 1-ից՝ Բելառուսի Հանրապետություն՝ 4,7%, Ղազախստանի Հանրապետություն՝ 7,33%, Ռուսաստանի Դաշնություն՝ 87,97%. 2015 թվականի փետրվարի 1-ից՝ Հայաստանի Հանրապետություն՝ 1,13%, Բելառուսի Հանրապետություն՝ 4,65%, Ղազախստանի Հանրապետություն՝ 7,25%, Ռուսաստանի Դաշնություն՝ 86,97%. 2015 թվականի հոկտեմբերի 1-ից՝ Հայաստանի Հանրապետություն՝ 1,11%, Բելառուսի Հանրապետություն՝ 4,56%, Ղազախստանի Հանրապետություն՝ 7,11%, Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,9% եւ Ռուսաստանի Դաշնություն՝ 85,32%:

7. Համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքները.

7.1. Անդամ պետությունների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 5 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) այն դրույթների պահպանումը, որոնք վերաբերում են

մաքսատուրքերն ազգային արժույթով այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին հաշվեգրելուն, որտեղ դրանք ենթակա են վճարման (Արձանագրության 3-րդ կետ): Ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի կիրառումը ներմուծման մաքսատուրքերի գումարին հաշվեգրված տույժերի (տոկոսների) գումարների մասով (Արձանագրության 1-ին կետ):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ 2015 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրումն ազգային արժույթով իրականացվել է այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են եղել վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի բռնագանձման դեպքում:

Մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում եւ կարգով՝ ներմուծման մաքսատուրքերի գումարին հաշվեգրված տույժերի (տոկոսների) գումարների հաշվեգրումն ու բաշխումն անդամ պետությունների միջեւ իրականացվել է ներմուծման մաքսատուրքերի նկատմամբ գործող կարգին համանման կարգով:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի փետրվար - դեկտեմբեր ամիսներին միասնական հաշվին մուտքագրվել է անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ենթակա 35 601 756,7 հազ. դրամի չափով ներմուծման մաքսատուրք, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 400 364,4 հազ. դրամ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 1 646 772,2 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 2 567 579,3 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 183 866,6 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 30 803 174,2 հազ. դրամ:

2015 թվականի փետրվար - դեկտեմբեր ամիսներին ԵԱՏՄ անդամ պետություններից մուտքագրված ներմուծման մաքսատուրքերը կազմել են 52 795 836,5 հազ. դրամ, այդ թվում՝

Բելառուսի Հանրապետությունից՝ 2 680 137,5 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 4 259 117,2 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 216 083,9 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 45 640 497,9 հազ. դրամ:

Բելառուսի Հանրապետությունում 2015 թվականին միասնական հաշվին մուտքագրվել է 8 559 461 689,3 հազ. բել. ռուբլու չափով ներմուծման մաքսատուրք, այդ թվում՝ 23 303 022,2 հազ. բել. ռուբլու չափով տույժ (տոկոս), որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 90 430 044,5 հազ. բել. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 396 320 277,0 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 617 936 305,1 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 41 248 594,7 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 7 413 526 468,0 հազ. բել. ռուբլի:

2015 թվականին ԵԱՏՄ անդամ պետություններից մուտքագրված ներմուծման մաքսատուրքերը կազմել են 7 456 011 289,8 հազ. բել. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 54 688 426,2 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 639 207 361,7 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 34 028 329,0 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 6 728 087 172,9 հազ. բել. ռուբլի:

Ղազախստանի Հանրապետությունում 2015 թվականին միասնական հաշվին մուտքագրվել է 1188 515 045,7 հազար տենգեի չափով ներմուծման մաքսատուրք, այդ թվում՝ 705 034,8 հազար տենգեի չափով տույժ, որոնք բաշխվել են հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 1 975 351,8 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 8 725 161,1 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 995 962,9 հազ. տենգե,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 13 604 176,0 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 163 214 393,9 հազ. տենգե:

2015 թվականին ԵԱՏՄ անդամ պետություններից մուտքագրված ներմուծման մաքսատուրքերը կազմել են 156 485 070,9 հազ. տենգե, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 1 196 374,9 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետությունից՝ 8 521 485,1 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 884 218,8 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 145 882 992,1 հազ. տենգե:

Ղրղզստանի Հանրապետությունում 2015 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին միասնական հաշվին մուտքագրվել է 3 068 854,4 հազ. սոմի չափով ներմուծման մաքսատուրք, այդ թվում՝ 87,6 հազ. սոմի չափով տույժ (տոկոս), որոնք բաշխվել են հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 34 064,3 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 139 939,8 հազ. սոմ,

Ղազախաստանի Հանրապետության բյուջե՝ 218 195,6 հազ. սոմ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 58 308,2 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 2 618 346,5 հազ. սոմ:

2015 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին ԵԱՏՄ անդամ պետություններից մուտքագրված ներմուծման մաքսատուրքերը կազմել են 3 445 512,3 հազ. սոմ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 26 522,8 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետությունից՝ 162 582,0 հազ. սոմ,

Ղազախաստանի Հանրապետությունից՝ 232 102,1 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 3 024 305,4 հազ. սոմ:

Ռուսաստանի Դաշնությունում 2015 թվականին միասնական հաշվին մուտքագրվել է եղել 556 526 171,7 հազ. ռուս. ռուբլու չափով ներմուծման մաքսատուրք, այդ թվում՝ 302 402,0 հազ. ռուս. ռուբլու չափով տույժ, որոնք բաշխվել են հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 5 847 549,1 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 25 764 144,8 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախաստանի Հանրապետության բյուջե՝ 40 171 122,7 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 2 798 085,2 հազ. ռուս. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 481 945 269,9 հազ. ռուս. ռուբլի:

2015 թվականին ԵԱՏՄ անդամ պետություններից մուտքագրված ներմուծման մաքսատուրքերը կազմել են 80 467 500,7 հազ. ռուս. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 3 899 141,6 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետությունից՝ 28 269 632,1 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 45 930 859,5 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 2 367 867,5 հազ. ռուս. ռուբլի:

7.2. Լիազորված մարմնի միասնական հաշվին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի մասով վճարումների հաշվանցում կատարելու կարգի կազմակերպումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից (Արձանագրության 3-րդ կետ):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց կարող են հաշվանցվել հարկեր եւ հավաքագրումներ, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վճարման ենթակա այլ վճարումներ (բացառությամբ հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի), որոնք մուտքագրվել են լիազորված մարմնի միասնական հաշվին: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը չեն կարող հաշվանցվել այլ վճարումների դիմաց, բացի այնպիսի հաշվանցման, որը կատարվում է մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի, ինչպես նաեւ տույժերի (տոկոսների) վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցման ընդհանուր գումարը կազմել է 398 768,6 հազ. դրամ:

Այս գումարի առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկել այն դրամական միջոցներից հաշվանցումներին, որոնք մուտքագրվել են այն ներմուծման մաքսատուրքերին, որոնց վճարման պարտավորությունն առաջացել է նախքան Արձանագրությանը միանալը՝ 40,0%:

2015 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին ներմուծման մաքսատուրքերի վճարման մասով պարտքի մարման դիմաց հաշվանցումներ չեն կատարվել:

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎՊԵ-133 հարցմամբ ՀՀԿ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի մասով վճարումների հաշվանցում կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ընտրովի ստուգման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Բելառուսի Հանրապետությունում 2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցումների ընդհանուր գումարը կազմել է 1 745 834 165,8 հազ. բել. ռուբլի:

Առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկել այն դրամական միջոցներից հաշվանցումներին, որոնք մուտքագրվել են որպես ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում՝ 99,4%:

2015 թվականին ներմուծման մաքսատուրքերի՝ պարտքի մարման դիմաց հաշվանցված ընդհանուր գումարը կազմել է 2 520 909,9 հազ. բել. ռուբլի:

Ներմուծման մաքսատուրքերից հաշվանցումների առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկնում Բելառուսի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների ավելացված արժեքի հարկի մասով պարտքի մարման դիմաց հաշվանցումներին՝ 94,4%:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2016 թվականի հունիսի 8-ի թիվ 03/01-166 հարցմամբ ԲՀ ՊՄԿ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվանցում կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ընտրովի ստուգման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցումների ընդհանուր գումարը 2015 թվականին կազմել է 1 415 869,0 հազ. տենգե:

Դրա առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկել Ղազախստանի Հանրապետության տարածք ներմուծվող ենթաակցիզային արտադրանքի մյուս տեսակներին կատարվող մուտքերից հաշվանցումներին՝ բացի Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության տարածքից ներմուծվող Մաքսային միության ապրանքներից՝ 74,9%:

2015 թվականին պարտքի մարման դիմաց ներմուծման մաքսատուրքերից կատարվող հաշվանցումների ընդհանուր գումարը կազմել է 52 941,4 հազ. տենգե:

Ներմուծման մաքսատուրքերից հաշվանցումների առավելագույն տեսակարար կշիռն իրականացված է ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի եւ (կամ) այն ներմուծման մաքսատուրքերի մասով պարտքի մարման դիմաց, որոնց վճարման պարտավորությունն առաջացել է նախքան Արձանագրությունն ուժի մեջ մտնելը՝ 88,6%:

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 9-9-2-39/1691-Ն հարցմամբ ՂՀ ՖՆ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցում կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ընտրովի ստուգման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Ղրղզստանի Հանրապետությունում Ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի՝ 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներմուծման մաքսատուրքերը հաշվեգրելու եւ բաշխելու վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաեւ Կենտրոնական գանձապետարանի ավտոմատացված համակարգի տեղեկությունների համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց եւ պարտքի մարման դիմաց հաշվանցումներ չեն կատարվել:

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցումների ընդհանուր գումարը 2015 թվականին կազմել է 3 410 872,2 հազ. ռուս. ռուբլի:

Դրա առավելագույն տեսակարար կշիռը կազմել են ապագա մաքսային եւ այլ վճարումների դիմաց կանխավճարներից՝ ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց կատարված հաշվանցումները՝ 74,7%:

Մաքսային վճարների վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումների ընդհանուր գումարը 2015 թվականին կազմել է 76 664,8 հազ. ռուս. ռուբլի:

Ներմուծման մաքսատուրքերից հաշվանցումների առավելագույն տեսակարար կշիռը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնության տարածք ներմուծվող ապրանքների ավելացված արժեքի հարկի մասով վճարողների պարտքի մարման դիմաց հաշվանցումներին (վճարման գումարը (վերահաշվարկներ, ապառք եւ պարտք՝ համապատասխան վճարման, այդ թվում նաեւ՝ չեղարկված վճարման մասով))՝ 51,9%:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2016 թվականի մայիսի 30-ի թիվ 3И 03-41/03-03 հարցմամբ Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցում կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ընտրովի ստուգման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

7.3. Անդամ պետություններից յուրաքանչյուրի լիազորված մարմինների կողմից մուտքերի առանձին հաշվառման կազմակերպում. այդ մուտքերի առանձին արտացոլումն անդամ պետություններից յուրաքանչյուրի բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ (Արձանագրության 5-րդ կետ):

2015 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինները պահպանել են լիազորված մարմնի միասնական հաշվին գտնվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձի, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարների, մյուս անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների, անդամ պետության բյուջե

տվյալ անդամ պետության կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման արդյունքում հաշվեգրված եկամտի գումարների, մյուս անդամ պետությունների կողմից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների առանձին հաշվառման եւ անդամ պետություններից յուրաքանչյուրի բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ արտացոլման վերաբերյալ՝ Արձանագրության 5-րդ կետի նորմերը.

Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարները փոխանցելու պարտավորությունների կատարման կետանցի դիմաց տոկոսները, ինչպես նաեւ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնց փոխանցումը մյուս անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին կասեցվել է, 2015 թվականի ընթացքում անդամ պետությունների բյուջեներ չեն մուտքագրվել:

7.4. Անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ: Օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման ժամկետների պահպանումը: Այդ գումարների, ինչպես նաեւ օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ (Արձանագրության 6-րդ կետ):

Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն

արտացոլվում են տվյալ անդամ պետության հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները փոխանցվում են տվյալ անդամ պետության բյուջե եւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին ոչ ուշ, քան անդամ պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրը, ինչպես նաեւ արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Մյուս անդամ պետությունների օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տվյալ անդամ պետության բյուջե մուտքագրված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների գումարներն արտացոլվում են ընթացիկ տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2015 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումն իրականացվել է Արձանագրության 6-րդ կետով սահմանված ժամկետներում:

Հայաստանի Հանրապետությունում վերջին աշխատանքային օրվա ընթացքում միասնական հաշվին մուտքագրված եւ անդամ պետությունների բյուջեներ փոխանցված ներմուծման մաքսատուրքերի գումարները կազմել են 250 487,7 հազ. դրամ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 2 780,4 հազ. դրամ.

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 11 422,2 հազ. դրամ.

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 17 809,7 հազ. դրամ.

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 4 759,3 հազ. դրամ.

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 213 716,1 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի՝ 2015 թվականի ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ բաշխման մասին հաշվետվության համաձայն՝ անդամ պետությունների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 35 601 756,7 հազ. դրամ. դրանցից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հաշվեգրման է ենթակա (հաշվի առնելով օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ բաշխված ներմուծման մաքսատուրքերը, որոնց գումարը կազմել է 2 780,4 հազ. դրամ) 400 364,4 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերի մուտքը կազմել է 53 193 420,5 հազ. դրամ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետություն՝ 397 584,0 հազ. դրամ.

Բելառուսի Հանրապետություն՝ 2 680 137,5 հազ. դրամ.

Ղազախստանի Հանրապետություն՝ 4 259 117,2 հազ. դրամ.

Ղրղզստանի Հանրապետություն՝ 216 083,9 հազ. դրամ.

Ռուսաստանի Դաշնություն՝ 45 640 497,9 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ հաշվի չեն առնվել օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված՝ 2 780,4 հազ. դրամ կազմող մուտքերն այն պատճառով, որ նշված հաշվետվությունը ձեւավորվել է ազգային օրենսդրության հիման վրա՝ առանց հաշվի առնելու Արձանագրության 6-րդ կետի նորմերը:

2015 թվականի վերջին աշխատանքային օրվա դրությամբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Հայաստանի Հանրապետության բյուջե Բելառուսի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 269 898,3 հազ. թել. ռուբլու չափով, Ղազախստանի

Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 5 713,7 հազ. տենգեի չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 660,3 հազ. սոմի չափով, եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից՝ 6 379,0 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2016 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Բելառուսի Հանրապետությունում 2015 թվականի վերջին աշխատանքային օրվա դրությամբ հանրապետական բյուջե բաշխված եւ հաշվեգրված ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվառված են 2015 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2015 թվականի վերջին աշխատանքային օրվա դրությամբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Բելառուսի Հանրապետության բյուջե Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 11 422,2 հազ. դրամի չափով, Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 23 472,4 հազ. տենգեի չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 2 712,7 հազ. սոմի չափով, եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից՝ 26 205,6 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2016 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ղազախստանի Հանրապետությունում 2015 թվականի վերջին աշխատանքային օրվա դրությամբ հանրապետական բյուջե բաշխված եւ հաշվեգրած ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվառված են 2015 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ (տվյալներում):

2015 թվականի վերջին աշխատանքային օրվա ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Ղազախստանի Հանրապետության բյուջե Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 17 809,7 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության

լիազորված մարմինների կողմից՝ 1 728 808,1 հազ. բել. ռուբլու չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 4 229,7 հազ. սոմի չափով, եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից՝ 40 860,0 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2016 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ղրղզստանի Հանրապետությունում վերջին աշխատանքային օրվա ընթացքում միասնական հաշվին մուտքագրված եւ անդամ պետությունների բյուջեներ փոխանցված ներմուծման մաքսատուրքերի գումարները կազմել են 59 488,9 հազար սոմ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 660,3 հազ. սոմ.

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 2 712,7 հազ. սոմ.

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 4 229,7 հազ. սոմ.

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 1 130,3 հազ. սոմ.

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 50 755,9 հազ. սոմ:

2015 թվականի համար ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ բաշխման մասին հաշվետվության համաձայն՝ անդամ պետությունների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 3 068 854,4 հազ. սոմ. դրանցից Ղրղզստանի Հանրապետության պետական բյուջե հաշվեգրման է ենթակա (հաշվի առնելով օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ բաշխված ներմուծման մաքսատուրքերը, որոնց գումարը կազմել է 1 130,3 հազ. սոմ) 58 308,2 հազ. սոմ:

Ղրղզստանի Հանրապետության 2015 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերի մուտքը կազմել է 3 502 690,2 հազ. սոմ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետություն՝ 26 522,8 հազ. սոմ.

Բելառուսի Հանրապետություն՝ 162 582,0 հազ. սոմ.

Ղազախստանի Հանրապետություն՝ 232 102,1 հազ. սոմ.

Ղրղզստանի Հանրապետություն՝ 57 177,9 հազ. սոմ.

Ռուսաստանի Դաշնություն՝ 3 024 305,4 հազ. սոմ:

Ղրղզստանի Հանրապետության 2015 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ հաշվի չեն առնվել օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված՝ 1 130,3 հազար սոմ կազմող մուտքերն այն պատճառով, որ նշված հաշվետվությունը ձեւավորվել է ազգային օրենսդրության հիման վրա՝ առանց հաշվի առնելու Արձանագրության 6-րդ կետի նորմերը:

2015 թվականի վերջին աշխատանքային օրվա դրությամբ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Ղրղզստանի Հանրապետության բյուջե Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 4 759,3 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 461 988,1 հազ. բել. ռուբլու չափով, Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 9 780,2 հազ. տենգեի չափով, եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից՝ 10 918,9 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2016 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ռուսաստանի Դաշնությունում 2015 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում դաշնային բյուջե բաշխված եւ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվառված են 2015 թվականի դաշնային բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2015 թվականի վերջին աշխատանքային օրվա ներմուծման մաքսատուրքերի բաշխումից եկամուտները, որոնք մուտքագրվել են դաշնային բյուջե Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 213 716,1 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝

20 745 697,5 հազ. բել. ռուբլու չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 50 755,9 հազ. սոմի չափով, եւ Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմինների կողմից՝ 439 181,5 հազ. տենգեի չափով, ենթակա են արտացոլման 2016 թվականի դաշնային բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

7.5. Հաշվառման կազմակերպումը եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերը բյուջեներ հաշվեգրելու հիմնավորվածությունը

Այն ներմուծման մաքսատուրքերը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչեւ Արձանագրությունն ուժի մեջ մտնելը, ենթակա չեն բաշխման անդամ պետությունների բյուջեների միջեւ:

Հայաստանի Հանրապետությունում այն ներմուծման մաքսատուրքերի հաշվառումը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչեւ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության միանալը, նախատեսված է Գանձապետարանի հետեւյալ հաշիվներում՝

900005014015՝ ներմուծման մաքսատուրքեր (իրավաբանական անձինք).

900005015012՝ ներմուծման մաքսատուրքեր (ֆիզիկական անձինք).

900005061289՝ մաքսատուրքեր, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչեւ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրությանը միանալը («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված):

Ընդ որում, առաջին երկու հաշիվները գոյություն են ունեցել մինչեւ ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության միանալը (մինչեւ 2015 թվականի փետրվար

ամիսը), իսկ երրորդը բացվել է Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված:

Այդ հաշիվներին մուտքերից ստացված եկամուտները հաշվառվել են 2015 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության 1-ին բաժնի («Հարկային եկամուտներ եւ պետական տուրքեր») 1.1 ենթաբաժնի («Հարկային եկամուտներ») «զ» ենթակետում («մաքսատուրք՝ ըստ ներմուծվող ապրանքների արժեքի»):

2015 թվականի փետրվարից դեկտեմբեր տվյալ հաշիվներ մուտքագրվել է 4 468 309,32 հազ. դրամ:

Կապված այն բանի հետ, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎՊԵ-133 հարցմանն ի պատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ամբողջ ծավալով չեն ներկայացվել այն փաստաթղթերի պատճենները, որոնք հիմք են ծառայել անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի հաշիվներին հաշվեգրելու համար, հնարավոր չի եղել եզրահանգում կատարել նշված գործառնությունների իրականացման հիմնավորվածության վերաբերյալ:

Բելառուսի Հանրապետությունում այն ներմուծման մաքսատուրքերը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչեւ Արձանագրությունն ուժի մեջ մտնելը, 2015 թվականին հանրապետական բյուջեում հաշվառվել են ըստ բյուջեի եկամուտների դասակարգման 1512208 ծածկագրի (այսուհետ՝ ԲԴԾ)՝ («Ներմուծման մաքսատուրքեր, որոնց վճարման հարկային պարտավորությունը ծագել է մինչեւ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) հաշվեգրման եւ բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելը»):

Եկամուտների՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների 2015 թվականի հանրապետական բյուջե մուտքագրվելու մասին հաշվետվության համաձայն՝

1 5 1 22 08 ԲԴԾ-ով եկամուտների գումարը կազմել է 7 289 707,6 հազ. բել. ռուբլի (2014 թվականի համեմատ աճել է 7,8 անգամ):

Չբաշխվող մուտքերի աճի հիմնական պատճառը «Տաբակ-Ինվեստ» ՍՊԸ-ի մաքսային ստուգման 2014 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 06711/09094/32000302 ակտով դրամական միջոցների՝ 4 791 899,4 հազ. բել. ռուբլու չափով փոխանցումն է եղել՝ ըստ մինչև 2010 թվականի սեպտեմբերի 1-ը ձեակերպված՝ ապրանքների հայտարարագրերի:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2016 թվականի հունիսի 8-ի թիվ 03/01-166 հարցմամբ ԲՀ ՊՄԿ-ի կողմից ներկայացված եւ նշված ԲԴԾ-ով վճարների հաշվեգրման իրավաչափությունը հաստատող փաստաթղթերի պատճենների ընտրանքային ստուգման արդյունքներով խախտումներ չեն հայտնաբերվել:

Ղազախստանի Հանրապետությունում այն ներմուծման մաքսատուրքերը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչև Արձանագրությունն ուժի մեջ մտնելը, 2015 թվականին հաշվառվել են հանրապետական բյուջեում 106112 ԲԴԾ-ով՝ («Ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքեր եւ (կամ) ներմուծման մաքսատուրքեր, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչև «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) հաշվեգրման եւ բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելը»):

106112 ԲԴԾ-ով մուտքերի մասին հաշվետվության համաձայն՝ 2015 թվականի ընթացքում ստացված ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 4 268 499,6 հազ. տենգե (2014 թվականի համեմատ աճել է 7,7 անգամ):

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 9-9-239/1691-Ո հարցմամբ ՂՀ ՖՆ ՊԵԿ-ի կողմից ներկայացված այն փաստաթղթերի պատճենների ընտրանքային ստուգման

արդյունքներով, որոնք հիմք են ծառայել 106112 ԲԴԾ-ով ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման համար, պարզվել է հետևյալը.

664 741,5 հազ. տենգե գումարի չափով ներմուծման մաքսատուրքերը (ստուգման համար ընտրված 106112 ԲԴԾ-ով մուտքերի ընդհանուր գումարի 57%-ը) վճարվել են այն կազմակերպությունների կողմից ապրանքի ներմուծման համար, որոնք աշխատում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ ՄՕ) 372-րդ հոդվածի շրջանակներում, եւ հաշվեգրվել են 106112 ԲԴԾ-ով հետևյալ կազմակերպությունների առնչությամբ՝

Համարը՝ ը/կ	Վճարման հանձնարարագրի համարը	Վճարման հանձնարարագրի ամսաթիվը	Վճարողի ԱՆՀ, ԲՆՀ	Վճարողի անվանումը	Գումարը՝ հազ. տենգե
1.	72274	16.04.2015	940540000210	ՊԵՏՐՈՂԱԶԱԽՍՏԱՆ ԿՈՒՄԿՈԼ ՌԵՍՈՐՍԻԶ	16 000,0
2.	2996	14.08.2015	60440002942	ԿԱՐԱԿՈՒԴՈՒԿՄՈՒՆԱՅ ՍՊԸ	27 840,0
3.	5157	30.07.2015	940240000021	«ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ «ԿԱԶԳԵՐՄՈՒՆԱՅ» ՍՊԸ	30 159,0
4.	6514	18.09.2015	940240000021	«ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ «ԿԱԶԳԵՐՄՈՒՆԱՅ» ՍՊԸ	37 535,4
5.	350TDGQSJ	03.06.2015	920941000346	ՍԱՅՊԵՄ ՂԱԶԱԽՍՏԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	43 532,9
6.	70958	23.01.2015	940540000210	ՊԵՏՐՈՂԱԶԱԽՍՏԱՆ ԿՈՒՄԿՈԼ ՌԵՍՈՐՍԻԶ	60 000,0
7.	7565	17.11.2015	940240000021	«ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ «ԿԱԶԳԵՐՄՈՒՆԱՅ» ՍՊԸ	70 233,6
8.	350TRVK5C	03.07.2015	920941000346	ՍԱՅՊԵՄ ՂԱԶԱԽՍՏԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	102 850,0
9.	2179271PT	23.04.2015	930440000929	"ՏԵՆԳԻԶՇԵՎՐՈՅԼ" ՍՊԸ	124 825,0
10.	90494	29.09.2015	980441003204	ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՆԱԲՐԻԶ ԴՐԻԼԼԻՆԳ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ	151 765,6
	Ընդամենը՝				664 741,5

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն ուղղված 2016 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 09-238 նամակի համաձայն՝ մաքսային կարգավորման ոլորտներից մեկը Եվրասիական տնտեսական միության սահմանով տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի վճարմանը (գանձմանը) առնչվող հարաբերություններն են:

Մաքսային օրենսդրությամբ չեն կանոնակարգվում ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ բաշխման հետ կապված իրավահարաբերությունները: Դրանց հաշվեգրման եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման կարգը սահմանված է Համաձայնագրով, իսկ 2015 թվականի հունվարի 1-ից՝ նաեւ Արձանագրությամբ, որոնք կարգավորում են անդամ պետությունների միջբյուջետային հարաբերություններին առնչվող հարցերը եւ ներառում են փոխգործակցության գանձապետական ասպեկտներ:

Այսպիսով, ՄՕ 372-րդ հոդվածի դրույթները չեն տարածվում ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների բաշխման հետ կապված հարցերի վրա, եւ համապատասխանաբար, դրանք ենթակա են բաշխման անդամ պետությունների բյուջեների միջեւ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Ծանոթագրություն՝

ՄՕ 372-րդ հոդվածով նախատեսված է, որ այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ ընդերքօգտագործման ոլորտում (վառելիքաէներգետիկ հատվածում) ծագել են մինչեւ Մաքսային օրենսգիրքն ուժի մեջ մտնելը եւ ծագում են այն ուժի մեջ մտնելուց հետո, կիրառվում են Ղազախստանի Հանրապետության մաքսային օրենսդրությունը եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային օրենսդրությունը, որոնց համապատասխան գործում են համապատասխան պայմանագրերը, իսկ այդ մաքսային օրենսդրություններով չկարգավորվող մասով՝ Մաքսային օրենսգրքի դրույթները:

Այն ներմուծման մաքսատուրքերի վճարումը կատարող կազմակերպությունների առնչությամբ, որոնց հաշվեգրումն իրականացվել է 106112 ԲԴԾ-ով՝ 510 588,3 հազ. տենգե գումարի չափով, ղազախական կողմը 2016 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ ամբողջ ծավալով չի ներկայացրել Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 9-9-239/1691-Ո հարցմամբ պահանջվող փաստաթղթերի պատճենները, այդ թվում՝

Համարը՝ ը/կ	Վճարման հանձնարարագրի համարը	Վճարման հանձնարարագրի ամսաթիվը	Վճարողի ԱՆՀ, ԲՆՀ	Վճարողի անվանումը	Գումարը՝ հազ. տենգե
1.	ТНКО326/15- 0002327	22.07.2015	0509400001237	«Ղազախստանի գարգացման բանկ» ԲԸ ԴԸ «ՂԶԲ-Լիզինգ» ԲԸ	13 381,6
2.	410	11.03.2015	20340004531	ԷՄԻՐ-ՕՅԼ	22 973,0
3.	548	14.04.2015	40440000209	«ԿՄԿ ՄՈՒՆԱՅ» ԲԸ	28 000,0
4.	750ULFBCH	04.09.2015	920941000346	ՍԱՅՊԵՄ ՂԱԶԱԽՍՏԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	29 414,4
5.	93006	08.12.2015	980441003204	ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՆԱԲՈՐՁ ԴՐԻԼԼԻՆԳ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ	30 000,00
6.	258191	11.12.2015	981141001567	ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԲԱՆԿ	32 185,7
7.	745009	17.03.2015	981141001567	ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԲԱՆԿ	39 196,4
8.	2178424PT	23.04.2015	930440000929	"ՏԵՆԳԻՉՇԵՎՐՈՅԼ" ՍՊԸ	44 382,5
9.	OP1218016	04.05.2015	990640000789	ՍՊԸ ԴԵՆԽՈԼՄ- ԺՈԼԴԱՍ	52 199,7
10.	304	24.02.2015	960141001560	ՊԱՐԿԵՐ ԴՐԻԼԼԻՆԳ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ընկերության Ղազախստանի մասնաճյուղ	67 786,9

11.	305	25.02.2015	960141001560	ՊԱՐԿԵՐ ԴՐԻԼԼԻՆԳ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ընկերության Ղազախստանի մասնաճյուղ	67 786,9
12.	395	05.03.2015	960141001560	ՊԱՐԿԵՐ ԴՐԻԼԼԻՆԳ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ընկերության Ղազախստանի մասնաճյուղ	83 281,2
	Ընդամենը՝				510 588,3

Հաշվի առնելով շարադրվածը՝ հնարավոր չի եղել եզրահանգում կատարել 510 588,3 հազ. տենգե գումարի չափով ներմուծման մաքսատուրքերի՝ 106112 ԲԴԾ-ով հաշվեգրման հիմնավորվածության վերաբերյալ:

Ղրղզստանի Հանրապետությունում անդամ պետությունների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերը 2015 թվականին հաշվառվել են 11 511 100 ԲԴԾ-ով («Ներմուծման մաքսատուրքեր, որոնք ենթակա են վճարման մինչեւ ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալը»):

Անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը, որը ստացվել է 11 511 100 ԲԴԾ-ով 2015 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը, կազմել է 81 716,24 հազ. սոմ:

Դրա հետ մեկտեղ, 2015 թվականի ընթացքում, այդ թվում մինչեւ ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալը, ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրումը նաեւ կատարվել է 11 511 100 ԲԴԾ-ով եւ կազմել է 3 553 776,3 հազ. սոմ:

Ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման իրավաչափությունը ստուգելու նպատակով 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար 11 511 100 ԲԴԾ-ի ստուգման ընթացքում ընտրվել է 15 մուտք՝ 28 760,5 հազ. սոմ գումարի չափով (Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2016 թվականի հունիսի 30-ի թիվ 02/903 հարցումը ՂՀ ԿԱ ՊՄԾ):

ՂՀ ԿԱ ՊՄԾ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենների ստուգմամբ հայտնաբերվել է, որ 2015 թվականին 11 511 100 ԲԴԾ-ով հաշվեգրված ներմուծման մաքսատուրքերը փոխանցվել են 2016 թվականին բաշխվող 11 511 400 ԲԴԾ-ով 22 074,6 հազ. սոմ գումարի չափով (ստուգման համար ընտրված 11 511 100 ԲԴԾ-ով մուտքերի ընդհանուր գումարի 76,8%-ը), այդ թվում՝

Համարը՝ ը/կ	Ամսաթիվ	Փաստաթղթի համար	Վճարող	Գումարը՝ հազ. սոմ	Հաշվանցման (փոխանցման) ամսաթիվը 11 511 100 ԲԴԾ-ից 11 511 400 ԲԴԾ
1.	11.11.2015	3/6911	«ՌՈՍԵԿ-ԱՍԻԱ» ՍՊԸ	1 941,4	26.07.2016
2.	19.10.2015	0080UTP15292001	00 LLC CentralAsiaPetroleum / ՍՊԸ «Միջինասիական պետրոլեում»	1 508,0	26.07.2016
3.	31.12.2015	0001/8	Սվերդլովսկի ԳՏԲ՝ ԲՀ չպարզված գումարների հաշիվներ	17 729,2	12.01.2016
4.	19.10.2015	0080UTP15292002	00 LLC CentralAsiaPetroleum / ՍՊԸ «Միջինասիական պետրոլեում»	516,0	26.07.2016
5.	25.12.2015	230	ZAO Bino/ Բինո ՓԲԸ	380,0	27.07.2016
	Ընդամենը՝			22 074,6	

6 685,9 հազ. սոմ գումարի չափով ներմուծման մաքսատուրքերի մասով, 2016 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ 11 511 100 ԲԴԾ-ով հաշվեգրման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ոչ ամբողջական ներկայացման պատճառով «Ավտոկենտրոն Խաչմերուկ» ՍՊԸ, «CHINA ROAD AND B RIDGE CORPORATION IN KYRGYZSTAN» ներկայացուցչություն, «ԻՆՏԻՄԱԿ ԿԱՐԳՈ Չ/Չ ԿՈՐՈՒԿԵԵՎ» ՍՊԸ, «ԱՏԼԱՍ ԹՐԵՎԵԼ Չ/Չ ՄԱՄԻՐՈՎԱ» ՍՊԸ, «Կազախմիս Գոլդ Դրոգստան» ՍՊԸ, «Ալոկոզայ» ՍՊԸ կազմակերպությունների առնչությամբ հնարավոր չի եղել եզրահանգում կատարել նշված գործառնությունների իրականացման հիմնավորվածության վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնությունում այն ներմուծման մաքսատուրքերը, որոնց վճարման պարտավորությունը ծագել է մինչև Արձանագրությունն ուժի մեջ մտնելը, հաշվառվում են հետևյալ ԲԴԾ-ներով՝ 153 110 01010 01 1000 180 («Ներմուծման մաքսատուրքեր (վճարման գումարը (վերահաշվարկներ, ապառքներ եւ պարտք՝ համապատասխան վճարի, այդ թվում չեղյալ հայտարարված վճարի գծով)»): 153 110 01010 01 2000 180 («Ներմուծման մաքսատուրքեր (տույժեր եւ տոկոսներ՝ համապատասխան վճարների մասով)»): 153 110 01010 01 4000 180 («Ներմուծման մաքսատուրքեր (այլ մուտքեր)»): 153 110 01010 01 5000 180 («Ներմուծման մաքսատուրքեր (հարկը (հավաքագրման), ապահովագրական վճարները պետական արտաբյուջետային ֆոնդերի բյուջեներ վերադարձնելու ժամկետը խախտելու համար հաշվեգրված տոկոսների եւ ավել բռնագանձված հարկի գումարի վրա հաշվեգրված տոկոսների վճարում):

Բյուջետային միջոցների դրամարկղային մուտքի եւ ելքի մասին հաշվետվության համաձայն (1-ին բաժին («Բյուջեի եկամուտներ»))՝ ներմուծման մաքսավճարների եւ Համաձայնագրին (Արձանագրությանը) համապատասխան չբաշխվող վճարների մուտքերը կազմել են 179 776,3 հազ. ռուս. ռուբլի (2014 թվականի համեմատ նվազել են 35,1 տոկոսով), այդ թվում՝

153 110 01010 01 1000 180 ԲԴԾ-ով՝ 155 116,1 հազ. ռուս. ռուբլի.

153 110 01010 01 2000 180 ԲԴԾ-ով՝ 25 491,3 հազ. ռուս. ռուբլի.

153 110 01010 01 4000 180 ԲԴԾ-ով՝ 23,1 հազ. ռուս. ռուբլի.

153 110 01010 01 5000 180 ԲԴԾ-ով՝ «մինուս» 854,2 հազ. ռուս. ռուբլի:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2016 թվականի մայիսի 30-ի թիվ 3И 03-41/03-03 հարցմամբ Ռուսաստանի ԴԽԾ-ի կողմից ներկայացված եւ նշված ԲԴԾ-ով վճարումների հաշվեգրման իրավաչափությունը հաստատող փաստաթղթերի պատճենների ստուգման ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել:

7.6. Վճարողին հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձի կազմակերպում (Արձանագրության 7-9-րդ կետեր):

Հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձն իրականացվում է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ Արձանագրության դրույթներին համապատասխան եւ ազգային նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում թիվ 900008000268 հատուկ հաշվից («Անդամ պետությունների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկ») ներմուծման մաքսատուրքերի վերադարձվող ընդհանուր գումարը 2015 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսների համար կազմել է 35 306,7 հազ. դրամ:

Կապված այն բանի հետ, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎՊԵ-133 հարցմանը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ամբողջ ծավալով չեն ներկայացվել այն փաստաթղթերի պատճենները, որոնք հիմք են ծառայել հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերը վճարողներին վերադարձնելու համար, հնարավոր չի եղել եզրահանգում կատարել նշված գործառնությունների իրականացման հիմնավորվածության վերաբերյալ:

Բելառուսի Հանրապետությունում 1 5 3 26 00 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են Բելառուսի Հանրապետության տարածքում եւ հաշվեգրվել են Բելառուսի Հանրապետության բյուջե «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձվող ընդհանուր գումարը 2015 թվականի համար կազմել է 56 344 617,2 հազ. բել. ռուբլի (2014 թվականի համար՝ 62 592 526,4 հազ. բել. ռուբլի):

2015 թվականին, 2014 թվականի համեմատ, նկատվում է վերադարձվող ընդհանուր գումարների նվազում՝ 6 247 909,2 հազ. բել. ռուբլով կամ 10 տոկոսով:

Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեի 2016 թվականի հունիսի 8-ի թիվ 03/01-166 հարցմամբ ԲՀ ՊՄԿ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի վերադարձման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Ղազախստանի Հանրապետությունում 106 101 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ հավաքագրումներ)», որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան) ներմուծման մաքսատուրքերի վերադարձվող գումարը 2015 թվականի համար կազմել է 1 808 077,6 հազ. տենգե:

2014 թվականի համեմատ 2015 թվականին վերադարձվող գումարները նվազել են 432 198,7 հազ. տենգեով կամ 19,3 տոկոսով:

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 9-9-2-39/1691-Ո հարցմամբ ՂՀ ՖՆ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի վերադարձման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Ղրղզստանի Հանրապետությունում 11511400 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են ՄՄՍ դրույքաչափերով եւ հաշվեգրվել «ԵԱՏՄ-ին միանալու մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձվող ընդհանուր գումարը 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար կազմել է 485,5 հազ. սոմ:

Կապված այն բանի հետ, որ Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2016 թվականի հունիսի 30-ի թիվ 02/903 հարցմանը ՂՀ ԿԱ ՊՄԾ-ի կողմից ամբողջ ծավալով չեն ներկայացվել այն փաստաթղթերի պատճենները,

որոնք հիմք են ծառայել հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերը վճարողներին վերադարձնելու համար, հնարավոր չի եղել կատարել եզրահանգում՝ նշված գործառնությունների իրականացման հիմնավորվածության վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնությունում 153 110 110 1001 0000 180 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ հավաքագրումներ)», որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածին համապատասխան) ներմուծման մաքսատուրքերի վերադարձվող ընդհանուր գումարը 2015 թվականի համար կազմել է 10 401 431,4 հազ. ռուս. ռուբլի:

2014 թվականի համեմատ 2015 թվականին վերադարձվող գումարները նվազել են 1 746 830,5 հազ. ռուս. ռուբլով կամ 14,4 տոկոսով:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2016 թվականի մայիսի 30-ի թիվ 3И 03-41/03-03 հարցմամբ Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից ներկայացված եւ 153 110 110 1001 0000 180 ԲԴԾ-ից գումարների վերադարձման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքներով խախտումներ չեն հայտնաբերվել:

7.7. Բաշխման եւ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվից տվյալ անդամ պետության բյուջե, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկի կազմակերպումը: Արձանագրությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանումը (Արձանագրության 11-12-րդ կետեր):

Անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկը եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից դրանց բաշխումը, սահմանած նորմատիվների համաձայն, իրականացվում է ավտոմատացված տեղեկատվական համակարգերի միջոցով:

Այդ գումարների հաշվարկման ալգորիթմը համապատասխանում է դրանց հաշվարկման՝ Արձանագրությամբ սահմանված կարգին:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը 2015 թվականին իրականացվել է լիազորված մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների միջեւ՝ յուրաքանչյուր անդամ պետության համար Արձանագրությամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության համար հետեւյալ ժամանակահատվածների ընթացքում՝ փետրվար-սեպտեմբեր՝ 1,13%, հոկտեմբեր-դեկտեմբեր՝ 1,11% (ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալու հետ կապված):

Բելառուսի Հանրապետության համար հետեւյալ ժամանակահատվածների ընթացքում՝ հունվար՝ 4,70%, փետրվար-սեպտեմբեր՝ 4,65% (ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված), հոկտեմբեր-դեկտեմբեր՝ 4,56% (ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալու հետ կապված):

Ղազախստանի Հանրապետության համար հետեւյալ ժամանակահատվածների ընթացքում՝ հունվար՝ 7,33%, փետրվար-սեպտեմբեր՝ 7,25% (ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված), հոկտեմբեր-դեկտեմբեր՝ 7,11% (ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալու հետ կապված):

Ղրղզստանի Հանրապետության համար հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածի ընթացքում՝ 1,9%:

Ռուսաստանի Դաշնության համար հետեւյալ ժամանակահատվածների ընթացքում՝ հունվար՝ 87,97%, փետրվար-սեպտեմբեր՝ 86,97% (ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված), հոկտեմբեր-դեկտեմբեր՝ 85,32% (ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալու հետ կապված):

2015 թվականին անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերն ըստ նորմատիվների բաշխելու ընթացքում խախտումներ չեն գրանցվել:

7.8. Անդամ պետությունների միջև ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման (Արձանագրության 10-րդ կետ) եւ անդամ պետություններին դրանց փոխանցման (Արձանագրության 13-րդ կետ) ժամկետների պահպանումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) անդամ պետություններ ուղարկելու յուրաժամանակությունը (Արձանագրության 13-րդ կետ):

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը եւ ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթղթերն ուղարկելը անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից իրականացվել է Արձանագրությամբ սահմանված ժամկետների պահպանմամբ:

7.9. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից արտարժույթային հաշիվներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու յուրաժամանակությունը (Արձանագրության III բաժին):

Անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի եւ լիազորված մարմինների կողմից կնքված ընթացիկ հաշիվների պայմանագրերի եւ առաջնային բանկային ու գանձապետական պայմանագրերի ընտրանքային ստուգման արդյունքներով պարզվել է, որ անդամ պետությունների պաշտոնական փոխարժեքներով ԱՄՆ դոլարի փոխարկման եւ այնուհետեւ գնման օրվա դրությամբ սահմանված պաշտոնական փոխարժեքով ազգային արժույթի դիմաց ԱՄՆ դոլար գնելու եւ անդամ պետությունների լիազորված մարմինների հաշիվներին ազգային արժույթով համարժեք գումարը հաշվեգրելու համար

բանկերի կողմից օրվա սկզբի դրությամբ մնացորդների գումարով դրամական միջոցները դուրս գրելու ալգորիթմը համապատասխանել է Արձանագրության III բաժնով սահմանված պահանջներին:

7.10. Համաձայնեցված եւ հաստատված ձեւերով (Արձանագրության 42-րդ կետ) անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ժամանակ արձանագրության IV-րդ բաժնով սահմանված կարգի եւ ժամկետների պահպանում: Ներմուծման մաքսատուրքերի մուտքերի, բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից մուտքագրված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերից ստացված եկամուտների դինամիկայի վերլուծություն:

